# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# «ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/48» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

**13.11.2025թ.**
**ժամը՝ 10:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ՝- Մ. Մաթևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Մուրադյան

Ղ. Ղուկասյան

1. <u>Գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.</u>

Հանձնաժողովը որոշեց.

**1.1** Ընդունել ի գիտություն, որ համակարգի կողմից 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած «ՄԱՍ ՄՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզված համակարգով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրված անհամապատասխանությունների մասին 10.11.2025թ.-ին ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից անհամապատասխանությունների շտկման նպատակով ներկայացվել է ապրանքի ամբողջական նկարագիր՝ eauction.armeps.am համակարգով, սակայն այն իր բովանդակությամբ չի համապատասխանում հրավերով նախատեսված պայմաններին, քանի որ տեխնիկական բնութագրում նշված շարժիչի յուղերից ոչ մեկը չեն արտադրվում մասնակցի կողմից ներկայացված ֆիրմայի կողմից:

Ընդունվել է որոշում` կողմ -3, դեմ-0

2. **<u>Պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին</u>**

13.11.2025թ. փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

**2.1** «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ-ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակցի ոչ գնային պայմանները գնահատել բավարար:

2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած «ՄԱՍ ՄՈՒՍ» ՍՊԸ-ի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակցի ոչ գնային պայմանները գնահատել անբավարար և մերժել ու տվյալ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի:

**2.2** 1-ին չափաբաժնով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ» ՍՊԸ–ին:

**2.3** Հաստատել «ՊՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-2025/48» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն: Անգործության ժամկետի ավարտից հետո (10 օրացուցային օր) հաղթող մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ կներկայացվի:

Բոլոր գործողությունները իրականացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ-0

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ- ՝ Մ. Մաթևոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Վ. Մուրադյան

Ղ. Ղուկասյան

Հանձնաժողովի քարտուղար - Կ. Գասպարյան